նեաց, և դարձաւ 'ի Հայս։ Ապա եկեալ Անակ 'ի Պալխայ՝ որպէս թէ անտի փախուցեալ, նենգութեամբ բարեկամ եղև Խոսրովու, որ էր ազգական նմին։ Եւ պահ գտեալ 'ի յորս էրէոյ սպան զԽոսրով. և մնացին Հայք անիշխան ամս Ի.Զ.։

Տրդատ՝ որդի Խոսրովու՝ ամս Ծ.Զ.։ Սա ի ԺԵ ամի թագաւորութեան իւրոյ նահատակեաց զՀռիփսիմեանսն՝ զճգնազգեաց սուրբ Կուսանսն. և Աստուածային նշանք եղեն՝ 'ի ձեռն սրբոյն Գրիգորի։ Սա իբրև ել 'ի բանտէ Վիրապին, սկիզբն արար քարոզութեան, և լուսաւոր վարդապետութեամբ լուսաւորեաց զաշխարհըս մեր. և բժշկեաց զՏրդատ և զիշխանսըն. և մկրտելով զամենեսեան յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, էած զնոսա 'ի սուրբ հաւատս Քրիստոսի։ Եւ 'ի ցուցմանէ Աստուծոյ՝ ետ շինել զսուրբ Կաթուղիկէն Էջմիածին և զայլ վկայարանըս, զորս հիմնարկեալ շինեցին Թագա-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան